

2011 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 մայիսի 2009թ. N 1

Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի մարդահամարի  
նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման ծախսերի  
նախահաշվին հավանություն տալու մասին

---

Լսելով ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահի՝ <<Հայաստանի  
Հանրապետությունում 2011 թվականի մարդահամարի նախապատրաստման,  
անցկացման և նյութերի մշակման ծախսերի նախահաշվի>> վերաբերյալ  
հաղորդումը հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Հավանություն տալ “Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի  
մարդահամարի նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման ծախսերի  
նախահաշվին” (ըստ հավելված 1-ի՝ պարզաբանումներով), համաձայնելով, որ այն  
կարող է ըստ համապատասխան տարիների պետական բյուջեների մասին  
ՀՀ օրենքների ենթարկվել փոփոխության, հաշվի առնելով պետական բյուջեից  
հատկացումների հնարավորությունները, միջազգային կազմակերպությունների և  
օտարերկրյա պետությունների կողմից հնարավոր տրամադրվելիք դրամաշնորհային  
ծրագրերի առանձնահատկությունները, ինչպես նաև մարդահամարի  
նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման նախատեսված  
գործիքակազմի կատարելագործման հնարավորությունները:

Հանձնաժողովի նախագահ՝  
ՀՀ փոխվարչապետ,  
ՀՀ տարածքային կառավարման նախարար

Ա. Գևորգյան

Հանձնաժողովի քարտուղար՝  
ՀՀ ազգային վիճակագրական ծառայության  
աշխատակազմի մարդահամարի և  
ժողովրդագրության բաժնի պետ

Կ. Կույունջյան